ՀԱՅԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հունվար – Սեպտեմբեր 2024



Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ 2024թ. հունվար-սեպտեմբեր, աճողական



Գծապատկեր 2. ՏԱՑ–ին ճյուղերի նպաստը, տոկոսային կետ



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 8.7%:

- **Արդյունաբերություն:** Արդյունաբերության աճը 2024թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 12.6%: Աճին դրական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերությունը, որի աճը կազմել է 18.9%: Բացասական ազդեցություն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը, որի կրճատումը կազմել է -7.8%:
- **Առևտուր:** Ներքին առևտրաշրջանառության աճը 2024թ. հունվար–սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 19.5%: Ավտոմեքենաների առևտրի ծավալը նույն ժամանակահատվածում նվազել է –7.3%–ով:
- **Գյուղատնտեսություն:** Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ծավալի աճը 2024թ. հունվար–սեպտեմբերին կազմել է 2.0%, իսկ գյուղատնտեսության ծավալի աճը՝ 1.8%: Գյուղատնտեսության աճին դրական է նպաստել բուսաբուծության 2.0%, անասնապահության 1.5% և ձկնորսության 6.2% աճը, միաժամանակ բասական ազդեցություն է ունեցել անտառային տնտեսության -5.6% կրճատումը:
- **Շինարարություն:** Շինարարության աճը 2024թ. հունվար–սեպտեմբերին կազմել է 15.9%: Շինարարության ծավալի աճին նպաստող հիմնական աղբյուրները հանդիսացել են բնակչության միջոցներով շինարարության 63.4% աճը և բյուջեի միջոցներով շինարարության 26.8% աճը:
- **Ծառայություններ:** Ծառայությունների ծավալի աճը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 5.9%, աճ է գրանցվել ծառայությունների բոլոր տեսակների գծով, բացառությամբ «տրանսպորտ» և «տեղեկատվություն և կապ» ծառայության տեսակների, որոնք կրճատվել են համապատասխանաբար -13.4% և -8.4%–ով: Աճ է գրանցվել հետևյալ ենթածառայությունների գծով՝ «կացություն և հանրային սննդի կազմակերպում»՝ 8.2%, «ֆինանսական և ապահովագրական գործունեություն»՝ 22.0%-ով, «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ աճել է 10.3%-ով և այլն:

Զբոսաշրջություն

Գծապատկեր 3. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ (հազար)



Գծապատկեր 4. Ռուսաստանից զբոսաշրջիկների քանակ



Զբոսաշրջության դինամիկա (2023-2024 թթ. հունվար-սեպտեմբեր):

- 2024 թվականի հունվար-սեպտեմբերին թվաքանակը կազմել է **1,721.245՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով - 6.2%-ով:
- 2024 թվականի հունվար-սեպտեմբերին Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել բոլոր մուտքերի **43.0%**-ը: 2023 թվականի նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին էր ընկել բոլոր մուտքերի 50.6%-ը:
- Ժամանողների ընդհանուր թվի փոքր նվազումը պայմանավորված է առաջին հերթին Ռուսաստանից ժամանողների թվի կրճատմամբ, որոնք ամենամեծ մասնաբաժին են կազմում:

Զբոսաշրջություն



Ժամանումներ ըստ երկրի

Հունվար-սեպտեմբեր 2024

Երկիր	Զբոսաշրջիկներ	S/S համեմատ
Ռուսաստան	740,890	-20.1%
Վրաստան	199,145	7.1%
Իրան	136,494	17.8%
ԱՄՆ	48,257	1.3%
Հնդկաստան	33,233	53.6%
Չինաստան	24,444	69.8%
Ֆրանսիա	24,243	8.6%
Գերմանիա	22,519	2.3%
Ուկրաինա	21,427	5.2%
Ֆիլիպիններ	16,695	40.4%

Միջազգային առևտուր - Արտահանում

Գծապատկեր 5. Ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 6. 2024 թվականի հունվար-սեպտեմբերին առավելագույն արտահանման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն ԱՄՆ դոլար



Արտահանումը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 10,585.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5,420.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 2.1 անգամ:

2024 թվականի հունվար-սեպտեմբերին Հայաստանից արտահանված հիմնական ապրանքախմբերն են (աճերը բերված են 2023թ. հունվար–սեպտեմբերի համեմատ)՝

- **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ 4,935.5 մլն ԱՄՆ դոլար (աճել է 13.0 անգամ):**
- **Ոսկերչական իրեր՝ 775.9 մլն ԱՄՆ դոլար (աճել է 10.3 անգամ):**
- **Հեռախոսային և հեռագրային ապարատ,մոդեմ, մասեր՝ 509.0 մլն ԱՄՆ դոլար (աճել է 29.6%-ով):**
- **Ադամանդե քար՝ 456.1 մլն ԱՄՆ դոլար (աճել է 4.3%-ով):**
- **Պղինձի հանքաքար, խտանյութ՝ 417.4 մլն ԱՄՆ դոլար (աճել է 15.1%-ով):**

2024 թվականի հունվար-սեպտեմբերին վերոնշյալ 5 ապրանքախմբերը կազմում են ընդհանուր արտահանման ծավալի 67.4%-ը, որից միայն «Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի» ապրանքախմբի տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ կազմել է 46.9%:

Հարկ է նշել, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից տնտեսական գործունեության ոլորտների միջև 24 և 32 ծածկագրերով տվյալների վերադասակարգման պատճառով վերանայվել են ոսկու արտահանման և ներմուծման ցուցանիշները:

Միջազգային առևտուր - Արտահանում

Գծապատկեր 7. Արտահանումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



2024 թվականի հունվար-սեպտեմբերին արտահանման գծով հիմնական գործընկեր երկրներն են՝

- Արաբական Միացյալ Էմիրություններ. արտահանման ծավալը կազմել է 4,550.8 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 6.8 անգամ,
- Ռուսաստան. արտահանման ծավալը կազմել է 2,274.4 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով -15.5%-ով,
- Հոնկոնգ. արտահանման ծավալը կազմել է 1,572.8 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.4 անգամ,
- Չինաստան. արտահանման ծավալը կազմել է 907.8 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.8 անգամ:

Վերոնշյալ 4 երկրների գումարային արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 87.8%–ը:

Միջազգային առևտուր - Ներմուծում

Գծապատկեր 8. Ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 9. 2024 թվականի հունվար-սեպտեմբերին առավելագույն ներմուծման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն ԱՄՆ դոլար



Ներմուծումը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 13,122.5 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4,614.0 մլն. ԱՄՆ դոլարով կամ 54.2%-ով:

2024 թվականի հունվար-սեպտեմբերին Հայաստան ներմուծված հիմնական ապրանքախմբերն են (աճերը բերված են 2023թ. հունվար–սեպտեմբերի համեմատ)՝

- **Ոսկի անշակ, կիսամշակ, փոշի՝ 5,178.7 մլն ԱՄՆ դոլար (աճել է 15.4 անգամ):**
- **Հեռախոսային սարքեր և ապարատներ՝ 618.2 մլն ԱՄՆ դոլար (աճել է 16.6%-ով):**
- **Ադամանդե քար՝ 440.0 մլն ԱՄՆ դոլար (աճել է 6.4%-ով):**
- **Ավտոմեքենա մարդատար՝ 414.5 մլն ԱՄՆ դոլար (կրճատվել է 2.6 անգամ):**
- **Բնական և հեղուկ գազ՝ 382.7 մլն ԱՄՆ դոլար (աճել է 5.7%-ով):**
- **Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)՝ 340.7 մլն ԱՄՆ դոլար (կրճատվել է -8.9%-ով):**

2024 թվականի հունվար-սեպտեմբերին վերոնշյալ 6 ապրանքախմբերը կազմում են ընդհանուր ներմուծման ծավալի 56.0%-ը, որից միայն «Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի» ապրանքախմբի տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 39.3%:

Միջազգային առևտուր - Ներմուծում

Գծապատկեր 10 Ներմուծումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



2024 թվականի հունվար-սեպտեմբերին ներմուծման գծով հիմնական գործընկեր երկրներն են՝

- Ռուսաստան. ներմուծման ծավալը կազմել է 7,632.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 3.3 անգամ,
- Չինաստան. ներմուծման ծավալը կազմել է 776.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 7.6%-ով,
- Վրաստան. ներմուծման ծավալը կազմել է 578.9 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով -17.6%-ով,
- Իրան. ներմուծման ծավալը կազմել է 449.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2.4%-ով:

Վերոնշյալ 4 երկրների գումարային ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման 71.9%–ը:

Աշխատանքի շուկա, ֆորմալ զբաղվածություն

Գծապատկեր 11. Ֆորմալ զբաղվածություն, հազար աշխատող



2024թ. սեպտեմբերի վերջին ֆորմալ զբաղվածների քանակը հասել է 776.8 հազարի, 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.6%–ով:

2024թ. սեպտեմբերի վերջի դրությամբ զբաղվածությամբ առաջատար ճյուղերն են հանդիսացել՝

- **Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում՝** 130.5 հազար աշխատող:
- **Կրթություն՝** 125.6 հազար աշխատող:
- **Մշակող արդյունաբերություն՝** 91.4 հազար աշխատող:
- **Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում՝** 52.8 հազար աշխատող:
- **Տեղեկատվություն և կապ՝** 45.0 հազար աշխատող:
- **Շինարարություն՝** 42.2 հազար աշխատող:

Գծապատկեր 12. Ֆորմալ զբաղվածություն (առաջատար ոլորտներ) 20242. սեպտեմբեր, տեսակարար կշիռ %



2023 թվականի սեպտեմբերի համեմատությամբ զբաղվածների թվաքանակի աճ է գրանցվել բոլոր ոլորտներում:

Աշխատանքի շուկա, աշխատավարձ

Գծապատկեր 13. Միջին աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի
2024թ. սեպտեմբեր, հազար ՀՀ դրամ



Գծապատկեր 14. Աշխատավարձի փոփոխությունն ըստ ճյուղերի
Սեպտեմբեր 2024թ. , %



2024թ. սեպտեմբերին միջին ամսական աշխատավարձը կազմել է 279,279 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.8%–ով, մասնավորապես պետական համակարգում միջին ամսական աշխատավարձը 2024թ. սեպտեմբերին կազմել է 218,809 դրամ (+7.2%), իսկ մասնավոր հատվածում՝ 303,015 դրամ (+6.5%):

2024թ. սեպտեմբերին առավելագույն բարձր աշխատավարձ ունեցող 3 ճյուղերն են՝

- **Տեղեկատվություն և կապ՝** 835,840 դրամ:
- **Ֆինանսական և ապահովագրական գործունեությունն՝** 809,417 դրամ:
- **Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝** 478,763 դրամ:

2023թ. սեպտեմբերի համեմատ աշխատավարձի աճ է գրանցվել բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և տեղեկատվության և կապի ոլորտներում:
Առավելագույն աճ գրանցվել է հետևյալ ճյուղերում՝

- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝** +40.4%:
- **Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝** +13.5%:
- **Մշակող արդյունաբերություն՝** +13.1%:

Դրամական միջոցների ներհոսք ու փոխարժեք

Գծապատկեր 15 Դրամային փոխանցումներ և փոխարժեք



2024թ. հունվար–սեպտեմբերին դրամային փոխանցումների ընդհանուր ներհոսքը կազմել է 3,963.9 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կրճատվելով -7.0%–ով:

2024թ. հունվար-սեպտեմբերին զուտ ներհոսքը կազմել է 888.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կրճատվելով -33.3%–ով:

Դրամային փոխանցումների առավելագույն մասնաբաժինը 2 երկրներից է՝ Ռուսաստան և ԱՄՆ (գումարային տեսակարար կշիռը կազմել է 78.0%):

- Ռուսաստանից դրամային ներհոսքը կազմել է 2,571.0 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–սեպտեմբերի համեմատ կրճատվել է -14.3%–ով).
- ԱՄՆ–ից դրամային ներհոսքը կազմել է 505.3 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–սեպտեմբերի համեմատ աճել է +4.5%–ով):

ԱՄՀ-ի տնտեսական կանխատեսման համաձայն՝ 2024 թվականին ԱՄՆ-ի և Ռուսաստանի տնտեսական աճը կկազմի համապատասխանաբար 2.8% և 3.6%, իսկ 2025 թվականին՝ համապատասխանաբար 2.2% և 1.3%:

Գծապատկեր 16 Դրամային հոսքերն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ



Գծապատկեր 17: ՀՆԱ աճի կանխատեսում, %



Գնաճը Հայաստանում ու աշխարհում



Գծապատկեր 18. Գնաճի մակարդակ 2024թ. սեպտեմբերին տարեկան տոկոսային փոփոխություն



2024 թվականի հունվար-սեպտեմբերին ինֆլացիան Հայաստանում մնում է ցածր

Ստորև ներկայացվում է Հայաստանում և տարածաշրջաններում գրանցված գնաճի ցուցանիշները՝

- Աշխարհ (159 երկիր)՝ 6.8%
- Ասիա (43 երկիր)՝ 5.8%
- Եվրոպա (46 երկիր)՝ 3.4%
- Հայաստան՝ 0.6%

Գների ինդեքսի միտումը





Սպառողական գների ինդեքսն (ՍԳԻ) ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների:

- Գնաճ՝ 0.6% (2024 թվականի սեպտեմբեր),
- Աճողական գնաճ՝ 0.0% (2024 թվականի հունվար-սեպտեմբեր):

Սպառողական գների ինդեքսը ներկայումս ցածր է ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված 4% նպատակային ցուցանիշից:

Հայաստանում ճյուղային գների ինդեքսների մեծ մասը 2024 թվականի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում մնացել է համեմատաբար կայուն՝ ներմուծման և արտահանման ոլորտներում նկատելի բացառություններով:

- **Ներմուծման գների ինդեքսը** բացասական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին կիսամյակում ցույց է տվել դրական դինամիկա:
- **Արտահանման գների ինդեքսը** դրական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին կիսամյակում զգալի բացասական տեղաշարժ է տեղի ունեցել: Միաժամանակ նկատվում է արտահանման գների ինդեքսի բացասական ցուցանիշների աստիճանական նվազում, ինչը վկայում է դրական դինամիկայի մասին:

Պետական բյուջե և պարտք

Գծապատկեր 21. Հայաստանի պետական պարտքը, մլն. ԱՄՆ դոլար



Գծապատկեր 22. Հայաստանի պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, մլրդ. ՀՀ դրամ



Հայաստանի պետական պարտքը 2024 թվականի սեպտեմբերին հասել է 12,501.5 մլն ԱՄՆ դոլարի, որից՝

- **Արտաքին պարտք՝** 6,295.9 մլն ԱՄՆ դոլար (-3.4% 2023 թվականի սեպտեմբերի համեմատ),
- **Ներքին պարտք՝** 6,205.6 մլն ԱՄՆ դոլար (+29.1% 2023 թվականի սեպտեմբերի համեմատ):

Արտաքին պարտքը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- **Պետական պարտք՝** ընդհանուր արտաքին պարտքի 91.7%-ը (-3.5% 2023 թվականի սեպտեմբերի համեմատ),
- **Կենտրոնական բանկի պարտք՝** 8.3% ընդհանուր արտաքին պարտքի (-1.9% 2023 թվականի սեպտեմբերիի համեմատ):

Հայաստանի բյուջեի եկամուտները 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել են 1,860.4 մլրդ դրամ (**+8.9%** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Աճը պայմանավորված է հարկերի և տուրքերի մուտքերով, որոնք նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 9.3%-ով՝ հասնելով 1,767.2 մլրդ դրամի:

Պետական ծախսերը 2024 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել են 1,933.4 մլրդ դրամ (+18.3% 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Որից՝

- **Ընթացիկ ծախսեր. ավելացել են** 17.1%-ով (բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, տոկոսների վճարում, դրամաշնորհներ և այլն).
- **Ոչ ֆինանսական ակտիվներ**. աճել են 25.9%-ով (ձեռքբերում և այլ գործունեություն):

Ցուցանիշների աղբյուրները

Սահիկաշար 2 - armstat.am/file/article/sv_09_24a_03.pdf

Սահիկաշար 3-4 - armstat.am/file/article/sv_09_24a_421.pdf

Սահիկաշար 5,6,7,8 - armstat.am/file/article/sv_09_24a_411.pdf

Սահիկաշար 9,10 - ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Սահիկաշար 11 - Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2024/10/22/world-economic-outlook-october-2024

Սահիկաշար 12- Inflation Rate - Countries – List

Սահիկաշար 13 - armstat.am/file/article/sv_09_24a_130.pdf

Սահիկաշար 14 - armstat.am/file/article/sv_09_24a_211.pdf